

ՄՄԱՐԹ գյուղի համայնքապետարանի բացումը Դեբետում

ԵՐԵՎԱՆ - Հուլիսի 31-ին տեղի կունենա Լոռու մարզի Դեբետ գյուղի վերանորոգված ու վերափոխված [համայնքապետարանի](#) բացումը, որ ներառում է ընդհանուր աշխատանքային տարածքը, հանդիպումների սրահը և ժամանակակից գրադարանը՝ Գրադարակ Դեբետը: Բացման արարողությանը ներկա կլինեն Լոռու մարզպետ **Արամ Խաչատրյանը**, Դեբետի համայնքապետ **Աշոտ Ղազարյանը**, «[Հայաստանի մանուկներ](#)» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) գործադիր տնօրեն **Կորյուն Խաչատուրյանն** ու «[Գրադարակ գրադարաններ](#)» հասարակական կազմակերպության համահիմնադիր և տնօրեն **Արուսիկ Չեյնալյանը**: Համայնքապետարանի վերակառուցումն ու Գրադարակ Դեբետի հիմնումն իրականացվում է ՔՈԱՖ-ի «ՄՄԱՐԹ Դեբետ» նախաձեռնության շրջանակներում, որը հավակնում է դառնալ գյուղական համայնքի համապարփակ զարգացման օրինակելի մոդել:

Համայնքապետարանի՝ ժամանակակից, տեխնիկապես հագեցած հանդիպումների սենյակն ապահովում է բոլոր նպաստավոր պայմանները համայնքապետարանի և այլ մարմինների ու կազմակերպությունների միջև հանդիպումների, առցանց, արագ աշխատանքային քննարկումների համար: Շինարարությունն արժեցել է 14.000 ԱՄՆ դոլար:

Իսկ համայնքապետարանի անձնակազմի ընդհանուր աշխատանքային տարածքը, որի շինարարությունն արժեցել է շուրջ 43.000 ԱՄՆ դոլար, ստեղծում է աշխատանքի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները:

Բազմաֆունկցիոնալ, ժամանակակից գրադարանը կառուցվել է Լոռու մարզի Դեբետի գյուղի համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում Դեբետի [համայնքապետարանի](#), ՔՈԱՖ-ի, «Գրադարակ գրադարաններ» հասարակական կազմակերպության համագործակցության արդյունքում: Բացի զուտ գրադարան լինելուց, այն նաև կլինի սեմինարների, աշխատարանների ու տարբեր միջոցառումների անցկացման հարմարավետ վայր: Գրադարանը, որ զբաղեցնում է 100 քմ տարածք, ունի սրահներ միջոցառումների և հանդիպումների համար, ինչպես նաև փոքրիկ սենյակ լռության պայմաններում աշխատելու կամ ուսանելու համար: Այն նախատեսված է միաժամանակ 3-6 տարեկան երեխաների, 7-17 տարեկան դպրոցականների ու 18-ից բարձր անձանց համար, հագեցած է անհրաժեշտ սարքավորումներով՝ համակարգիչ, պրոյեկտոր, էկրան, բարձրախոսներ, խոսափող, յուրահատուկ ու հարմարավետ կահույք: Գրքերի քանակն աստիճանաբար կաճի՝ 400-ից հասնելով մինչև 4000 անուն գիրք: Գրադարանի կառուցման և կահավորման բոլոր ծախսերը հոգացել է ՔՈԱՖ-ը, «Գրադարակ գրադարաններ» ՀԿ-ն ապահովելու է հաստատության շարունակական ու սահուն գործառնությունը՝ այդ թվում գրադարանավարի մեկ հաստիքի ապահովումը, որը կհամալրվի տեղաբնակ



CHILDREN
OF ARMENIA
FUND

մասնագետի կողմից: Իսկ Դեբետի համայնքապետարանն էլ ապահովելու է գրադարանի շաբաթական 7 օր հասանելիությունն ու հոգալու է գործառնական ծախսերի մի մասը: Նախագծի արժեքը կազմում է 40,000 ԱՄՆ դոլար:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՌԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները: 2015թ. սկսած՝ ՔՌԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՔՌԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: